34. ՀԵՔԻԱԹ ԱՆՕՏՔ ՄԱՐԴՈՒՆ

Կէղնի ու չէղնի մարդըմ կէղնի։ Էդ մարդն է օր քընց ղօր նեղության մեշ կէրթա։ Կնկան կասե.— Կնիկ, ես օր խուրբաթ չէրթամ, չէղնի։

Զուր թադարուք կտեսնա, կկապե զուր ճամբրուկն ու կէղնի ճամբորդ։ Դրկեցներուց մեկ-էրկու հոդի կլսեն, օր էդ մարդ կէրթա ղարիպութեն, կասին՝ մենք լե կիգանք։

Խոսք կիտան հ՝իրարու, մեկտեխ էրթան, մեկտեղ հ՝իդան։ Կէլնին իրեք, կկանչեն զուրանց աստված ու կընկնեն ճամբախ, կէրթան։

Շատ կէրթան, քիչ կէրթան, կիգան տեխըմ, օր ուրանց դարվեշըմ ռաստ կիգա։ Կհարցու էդոնցնե, կասե.— Ախբրտանք, դուք իրեքդ էդ հըմլա հ՝ու՞ր կէրթաք։

Ախբրտանք կասին.—Կէրթանք ղարիպութեն։

Կասե դարվեշ էդոնց.— Հինգ խրոռշ տվեք, ձրզիկ խրատըմ սորվեցում։

Ախբրտանք կասին.—Հայ, հինգ խրոռշ իտանք, խրատըմ սորվըցու՞ս, քու խրատ մըզիկ պետք չէ։

Էն առաջին էրթացող օր ելեր էր կանի վըր օտներուն, կէրթեր ղարիպութեն, կասե.

— Ախբրտանք, վալլահի, ես կիտամ հինգ խրոռշ, թըղ ընծիկ սորվեցու ղէդ խրատ։

Կիտա հինգ խրոռշ։

Դարվեշ կասե.—Առաջին՝ քչին խանյաթ էրե, շատին մ՝էնի, դու կէրթաս խուրբաթ, ինչ օր կիտան քզիկ, խանյաթ էրե, կախե զգլուխդ, աշխատե։

Տղեն կասե.—Է՞դ է։

Դարվեշ կասե.— Էդ է, կուզես հինգ խրոռշ տուր, մեկ լե սորվըցում։

Հայն կասե.—Վալլահի, ես տաս խրոռշ լե ունիմ, հինգ լե կհանեմ, կիտամ։

Հ՝ընկերներ կասին.—Ախբեր, դու ի՞նչ հավեսով մարդ իս, թող էրթանք։

Անկաշ չէնե, կհանե հինգ լե կիտա։

Դարվեշ կասե.— Սապր սալամաթ։

Տղեն կասե.— Է՞դ է։

Դարվեշ կասե.—Հա, կուզես հինգ խրոռշ տուր մեկ լե սորվեցում։

Մարդն կասե.— Տասնհինգ խրոռշ ունենք, տասն գնաց, մնաց հինգ, զէն հինգ լե կիտամ։

Կհանե, կիտա։

Դարվեշ կասե.—Կեռնուլ սավան կյուզալ օդըր դյունյադա*։

Դարվեշ կթողա, կէրթա։ Էնդոնք լե կընկնին ուրանց ճամբու հետ, կիգան, կիգան, կհասնին Իստանպոլ։

Կիգան Իստանպոլ, էն օր կմնան, օլոր օր կէլնեն, կիգան օր գործ փնտռին ուրանց։ Կիգան մեյդան կկանին։ Կիդան էն էրկուսին կասեն.— Քանի՞ խրոռշով կբանիք։ Մեկն կասե՝ տաս խրոռշ, մեկն՝ քսա[։ Մարդ կթողին, կէրթան։ Էդոր կասեն.— Քանի՞ խրոռշով կբանես։

Չէ՞ դարվեշ դաս տվեր էր, թե՝ քչին խանյաթ էրե։

Կասե.— Էնդրանց տվեր եք տաս խրոռշ՝ չէկան, ընծիկ տվեք հինգ խրոռշ՝ հ՝իգամ։ Առավ հինգ խրոռշ, գնաց էն օր բանավ, մեկելտոնք մացին պարապ։

Ինչ գլոխ ցավցում, վերջապես մարդուկն է հինգ տվին՝ բանավ տաս տվին՝ բանավ։ Բանավ, հա բանավ, պարապ չմնաց իսկի։ Դարվեշ հեղրմ ասեր էր՝ քչին խանյաթ էրե, զէդ խոսք էրեր էր գինդ, էձգի ուր անկաշ։ Իրեք չորս տարի թամամ աշխատավ, օր էփեի փարա էվելցուցեր է։

Մեկելդոնք օրըմ կբանին, տասն չըն բանի, ինչ օր լե առնին՝ մեխանեք ու քարխանեք կուտին։

Մարդըն տեսավ օր խելըմ փարա հ՝ևելցուցեր է, ասեց՝ ելնեմ էր-

---

* Սրտով սիրածն է գեղեցիկ աշխարհում (Ռ. Կ.)։

թամ իմ էրկիր։ Էդ խոսքեր մեջն էր, միակ հ՝ընկավ դարվեշի մեկել խոսքըն էլ՝ սապր սալամաթ։

Էն օր ելավ, բանելու չը դանցեր էր, քըրպեն հ՝իրարուց կպատռեր, ելավ քաղկի մեջ օլըրտավ։ Գնաց տեխըմ, տեսավ օր քոմըմ մարդիկ ջրհորի մը վրեն քոմուկ են, ջուր կքաշեն։ Վիրն օր կասեն՝ էկո քաշե, չի դա։ Էդ մարդ ասեց.— Տվեք հինդ խըռոշ, ես կիջնեմ քաշիմ։

Առավ հինդ խըռոշ, էկավ հ՝իջավ ջրհորի մեջ, քուլակըմ, էրկու ջուր քաշեց, վերջեն զինք օր կհանեն, կտրավ կապ, հ՝ընկավ ջրհորի մեջ։ Հ՝ընկեր է ջրհորի մեջ, դրա կասե. «Դարվեշ ընծիկ ասեր է. «Սապր սալամաթ, սապր սալամաթ»։ Կասեր ու կօլըրտեր։ Մեկ լե ձեռկ էնդին օր ափըլթըփեց, քիստվ քարըմ, ծակըմ բացվավ։ Ծակ բացվավ, մտավ ներս, մութ էր, դեն էս դին, դեն էն դին։ Քիչ մը լե գնաց, թամիզ տեսավ քեռշկ ու սարեկըմ, մարդըմ, պեսլամե մը ու մջակըմ հոդի նստուկ են, սամավար դրուկ, քըթրտ-քըթրտ կեռա։ Բանըմ չասեց, ասեց. «Թըղ ուրանք հարցուն, սապր սալամաթ է»։ Վերցին ասին.—Ախբեր, դու հ՝որի՞ չըս խոսա, դու իմա՞լ էկար հ՝ընկար էդա տեխ։

Պատմեց.— Ալու քեֆյաթ հմլա էղավ, հ՝ընկա հորըմ, ձեռքս թալի քար, ծակըմ բացվավ, փըրթա հ՝ընկա, հ՝ուդա ելա դուրս։

Տեսավ օր էդ մարդ նստուկ, հ՝առջև դրուկ է մեծ գորտըմ, ուրեն կբերեն չայ կիտան, կխմե ու կիշքե վըր էդ գորտան։

Չայ մը լե տղին բերին։

Մակար էդ մարդ ճինդար* է էղի, ճիներու թագավորի տղեն է, գորտ լե ճիներու թագավորի ախչիկն է էղի։ Գորտը հ՝առջին հեղ հուրնի-հրեղեն ախչիկ ըմ կէղնի, ճիներու թագավորի տղեն ինչ կէնե, չառնե զինք, թե կապս կէնե, թե լեպ կէնե, հուն չէլնի հետ։ Ախչիկ կտեսնա, օր չկառնա էդ մարդու ձեռքեն ազատի, կհագնի գորտան շապիկ, կէղնի գորտ ու կիգա կանի էդոր հ՝առջև։ Մարդ լե կկապե, թողե ուր հ՝առջև ու վրեն կիշքե, թե ե՞ր կէլնի գորտան շապկի մեջեն, օր առնե զինք։

Աֆանդրմ, էդոր թըլիսմ լե էն կէղնի, օր ինչ խըդար ուրեն մսաֆըր կիգա, կտանե նստըցու ուր հ՝առջև, կասե.— Բեն մի կյուզալ, սեն մի կյուզալ, յոխսա բու**,— գորտ ցույց կուտա։ Մըսաֆըրներ ասեր ին.— Սեն կյուզալ***։

Որն որ էդ տեսակ ասեր է, հինդ-տաս մարդ, տարեր է, թալեր է ճիներու աշխարհք, իսթըճի ջանավարներու մեջ կորցուցեր է, դոբն էկեր է հըմկա էդ մարդուն։

---

* Կախարդ (Ծ. Բ.)։

** Ես եմ գեղեցիկ, դու ես գեղեցի՞կ, թե սա՞ (Քրդ.—Թ. Բ.)։

*** Դու ես գեղեցիկ (Թ. Բ.)։

Հրամցուց, ուր խեշ նստեցուց, ասեց.— Ե՞ս իմ խորոտիկ, դու՞, չէ՞ թե էդա գո՞րտ։

Մարդն չէ օր հինգ խրոռոշ տվեր էր, խելք էր սորվի դարվեշից, ասեց. Կեռնյուլ սավան կյուզալ օլուր դյունյադա*։

Ասեց, չասեց դորտան շապիկ փաթլամիշ էղավ ու հուրնի-հրեղեն ախչիկըմ ելավ դուրս։

Աֆանդըմ, ախչիկն օր ելավ դուրս, մարդն ասաց.— Ես ղաթի էդորն էր կիշքենք օր առնենք ղախչկա թըլիսմ. հըմկա հ՚ուղե՝ իտամ։

— Ինչ հ՚ուղիմ, դու դինաս, ինչ կիտաս տուր, մինակ քինե կուզիմ, օր զիս հանիս լուս աշխարհ։

Ելավ մարդ, հանեց իրեք քար տվեց էդ մարդուն, ասեց.—Ը՞ր նեղությյան մեջ կընկնիս, կծախիս, քզիկ իտարա կենիս։ Քանի դու սաղ իս, քզիկ ու քու յոթ պորտան հերկե։

Զիրեք քար օր տվեց, խըլսավ, հանեց զէդ մարդ, դրեց լուս աշխարհ։ Ասեց.— Դըհ գնա, իմալ օր դու զիս հասուցիր իմ մուրազին, աստված լե հըմալ հասու զքզիկ քու մուրազին։

Ջունկլի մարդն զէն հուրնի-հրեղեն ախչիկ առավ ու ասեց՝ գնա քու ճամբու հետ։

Մարդն օր ելավ դուրս, ասեց. «Փա՞ռք աստծու, ելանք լուս աշխարհք։ Աստված դարվիշի բանն հաջողե, տվինք տաս խրոռոշ, իրեք խրատ սորվանք, իրեք լե պետք էկավ մըզիկ»։

Էկավ զուր պատրաստությեն տեսավ, առավ հալավ ուրեն ու ուր քուլֆըթին, եբ էտ էր կընկներ ճամբախ, կերթեր, ասաց. «Հա, ընծիկ էրկու հ՚ընկեր լե կան, մենք գալու վախտ խոսք էրինք, օր հիտրաց հ՚իգանք, հիտրաց էրթանք։ Ջենտոնք հ՚ուր՞ թալեմ էրթամ, պիտի գտնամ, առնեմ հետս, էրթամ»։ Գնաց փնտրեց, գտավ։ Ասեց.—Ախբըրտանք, ըրք հ՚ի՞գա էրթանք էրկիր, մենք գալու ատեն իրարու խոսք ենք տվի, օր հիտրաց էրթանք, հիտրաց հ՚իգանք։

Ասին.— Ախբեր, մըզիկ փարա չկա, հ՚ու՞ր հ՚իգանք։

Ասեց.— Ախբեր, մատամ օր խոսք ինք տվի հ՚իրարու հետ էրթանք, հ՚իգանք, էկեք, ձըր ճամբու մասրաֆ հար էրկիր ես կիտամ։

Մեկն ասեց՝ էրթանք, մեկն ասեց՝ չէրթանք, սորա փոշմընան, ասին.— Էդա տաս տարի էկեր ինք մենք, ինչ օր վաստրկեր ինք, կերի, հըմկա մանցեր ինք տուտուռութ կանուկ մեջտեղ, ելնենք էրթանք, իսկի՞ չէ դուռ կբանաք վըր մըր քուլֆըթեն, հերիք է։

---

* Սրտով սիրածն է լինում գեղեցիկ աշխարհում (Թ. Կ.)։

Ելավ մարդ, առավ զէդ էրկուք, գացին բաղնեկ, թամիզըմ համամ-լամիշ էրաց, էկավ իրեն ինչ տեսակ հալով օր առեր էր, մեկ-մեկ ձեռք լե էգոնց առավ, տվեց զկյամու նավլուն ու հ'ընկան ճամբու հետ, էկան։

Էկան, քզիկ օր ասեմ, Տրապիզոնի սարեր։ Էդ էրկուք իրարու կա-սեն. «Էդա մարդ զփարեն լըցեր է քամար, կէրթա, մենք ըռութ, ի՞նչ էրսով էրթանք մըր կնիկ-ճժու էրես»։ Փոխեցին զմիակ ուրանց։ Գիշերըմ սարու գլուխ թափած են, իրարու ասին. «Զեդի սպա՞նեք, չսպա՞նեք, իմալ էնենք, առնենք զէդոր փարեն, էրթանք»։ Սորա մեկն ասեց. «Էկո չըսպանեք, տանիք սարու մը գլուխ, կտրենք զէրկու օտք չոքեն հետ, առնենք զփարեն, թալենք էրթանք»։ Տարան տեխըմ, կտրեցին զէրկու օտք, քաշեցին ճամբուց դուրս թալին, առին զփարեքն ու էկան։

Լուսացավ, մարդն տեսավ օր զըրընկ-զըրընկ մեծ քարվընի մը ձեն կիգա։ Էկան էդ մարդու խեչեն քիչ մը հեռուն թափեցին։ Բազրկան ասեց խաղըրճոց.—Աճայիպ, իշեք տեսեք էտ դին ջուր չկա՞, չայըմ դնենք։

Գացին քիչ մը հեռուն, օր շուր կիշքեն, տեսան նըվու մը կիգա։ Բազրկան ասեց.— Տեսեք էն ինչ նըվոց է կիգա։

Գացին տեսան, օր մարդըմ հ'ընկուկ է էդտեխ, օտներ լե դրուկ կշտի հետ։

Բազրկան ղաթի հ'առջին հեղ ասեր էր. «Օր մալ էղնի՝ ձըզիկ, ջան էղնի՝ ընծիկ, ես ավլադ ու թավլադ չունեմ, կտանեմ ընծիկ էնիմ զավակ»։

Բերին օր մարդըմ, էրկու օտք լե կտրուկ։

Բազրկան ասեց.— Իմ ըռըսխըն է, ես հ'առջին հեղն եմ ասե, կտա-նեմ սաղցում, էնիմ ընծիկ զավակ։

Բերեց թամիզըմ թավե մը եղ լըցեց, խաշխըռնեց, դաղեց զմարդու օտներ, քյավեց կապեց, դրեց վըր ձիուն, առավ էկավ ուր տուն։ Ե՞ր տուն հասավ, հեքիմներ թային էրեց վըրեն օր սաղցընեն։

Մարդն էդ տեխ կհանե քարըմ ուր հանթե տըկեն, կիտա բազրկան բաշում, կասե.—Տար ծախե, հեքիմներուն մասրաֆ կէնես։

Բազրկան կասե.— Ջանըմ, ընծիկ փարա չկա՞, օր դու զքու քար կիտաս։

Մարդն կասե.— Թըղ էղնի։

Վերջապես ինչ կէնե, յախա չկըռնա ազատե, կհանե, կիտա։ Բա-զրկան օր կտեսնա զքար, կպաղբերնի, մնա։ «Ջանըմ,— կասե.— ես էդա քսան տարի է բազրկնութեն կէնիմ, ընծիկ հըմլա քարըմ չկա, էդոր հ'ու՞ստեն է էդ քար»։ Կտանե, կծախե, տոքթոռներուն կիտա էրկու փեստե օտկ լե շինել, մարդ կսաղնա, կէշնի կանի։ Բազրկնի հ'առջև, տզի պես, խըզմաթ կէնե, կէրթա կիգա։

Բաղբրկան լև տեսավ ղէտոր աչքբացութեն, բերեց ինչ օր կար ուրեն, հանձնեց էդոր։ Էլ էդ տղեն էր տան մեծ ու դուքնի մեծ, գալացող զէդ տղեն կճանչներ։

Թե հինդ, թե տաս տարի էդ տեսակ հ՚ընցուց, բաղբրկան հ՚ընկավ մեռավ։ Բաղբրկան օր հ՚ընկավ մեռավ, բաղբրկնի կնիկն դրեց ու ֆքրավ, ասեց. «Ես ավլատ ու թավլատ չունեմ, էդա տուն ու տեխ, դուքան, հ՚ըմեն բան լև հըմկա թասլիմ էղեր է էդա մարդուն, ելնիմ ուրիշ առնեմ՝ կէրթա իմ հարստութեն կորի, չառնեմ՝ չէղնի։ Էդոր բարին զէդ տղեն առնելն է»։

Ելավ կանչեց ղտերտեր, բերնց ինք, էդ մարդն ու տերտեր։ Կնիկն կխոստովանի ան տերտրոջ, թե. «Հըմլա միտք մը ունիք»։

Մարդ լե, հարի էնօր չասեր է, թե՝ ես կարքուկ եմ։ Եր կնիկ ղէդ խոսքն ասեց, վերցուց ասեց.— Տերտեր, ես քինե պահեմ, աստծուց ի՞նչ պահեմ, էդա տըսնուվեց տարի է ես իմ էրկրեն ելեր եմ։ Ընծիկ լե մամ, պապ, կնիկ ու ճիժ կեր, քառսուն օր մոֆուլ տվեք, հարցում, փնտռեմ, օր չէղան՝ կառնեմ ղքըզիկ. թե օր էղան՝ կճամբեմ բերեմ, դու լե իմ մոր տեխն ես, նստի, քանի սաղ ես՝ պահեմ։

Ելավ քառսուն-հիսուն օսկի տվեց, ճամբեց, գնաց ուր տուն։

Էն էրկու մարդն օր կկտրեն զէդ մարդու օտներ, թալեր են սաբու գլուխ, կլսեն, օր ուրանց հ՚ընկեր ճամբեր է մարդ, զուր կնիկ կտանե։ Ասին. «Ջանըմ, մենք զէդոր օտներ կտրեցինք, թալինք սարեր, էդի սա՞ղ է»։ Վրժվրժուն հ՚ընկավ ուրանց։ Էդ մարդն օր գացեր էր, էդ մարդու նինիկ ճրժու ետևեն, կնիկն զաթի մեռեր էր, ելավ առավ զէդոր մերն, զաղբերն ու տղեն, էկավ։ Էն մարդիկ լե, օր կտրած են զէդոր օտներ, ըռութ էղած են, ելան հ՚ընկան էդոր ետև, էկան։ Ասին. «Երթանք տեսնանք էդի սա՞ղ է, իմա՞լ է էդոր հալ ու հալպաթն»։

Բերին զմերն, զաղբերն ու զտղեն, մարդն տեսավ օր կնիկ չկա, ելավ զբաղբրկնի կնիկ լե առավ ու սկսեց իր գործին իշքել։

Եր կարգվավ փըրթվավ, մերն ասեց.— Ֆըլան մարդիկ օր փըրթան էկան, գացինք զքըզիկ հարցուցինք։ Ասին. «Իմա՞լ է, հանդե Իստանպոլա մեջ կուտե, կխմե, ու ուր քեֆին կիշքե»։

Տղեն ասեց.— Մըտ աստված այբանե։

Հ՚ընցավ ժամանակըմ։ Էդ մարդն է, օր մը նստուկ էր ուր դուքնի դուռ, նարկելա կքաշեր, տեսավ էրկու մարդ էկան հ՚ընցան։ Ասաց. «Հըն, էդրանք իմ օտներու կտրողներն ին»։ Շուտ զմշակ ճամբեց ետևնե ուրանց։ Ասաց.— Գնա էդոնց ասե՝ կաշխատի՞ք, օր ասեն՝ կաշխատինք, առ էկո հ՚ոդա։

Ծառան գնաց հասավ, ասաց.— Կաշխատի՞ք։

Ասին.— Հա, հ՚ո՞ւրին չընք աշխատի։

Բազբրկան ասեց.— Օր կաշխատիք, քելեք էրթանք մըր տուն, քիչըմ բան կա, ցուցում՝ բանեք։

Առավ էկավ ուր տուն, ասեց.— Զէդա հուղ կփորեք, հ՚ըլնաք ծառերու քոքերու վրեն, զառուն կիստկեք։ Ու թողեց գնաց, ասեց.— Եր կխըլըսիք, կնստեք տուն, հար հ՚իրկուն հ՚իդամ իտամ զձըր հախ։ Կնկան լե թանբիհ էրեց.— Եր էդոնք գործե կխըլըսին, պղինձ կդնես, ջուր կտաքցուս, թամիզ մը զուրանք կլողկըցուս, մեկ-մեկ ձեռք աղեկ հալավ կհագուս, կհանես դնես վըր յորղան-դոշկին, հարի ես հ՚իգամ։

Մարդիկ աշխատան, օր խըլըսան, կնիկ բերեց լոզկըցուց, թամիզըմ դրեց վըր դոշկին։

Հ՚իրկուն դառձավ էկավ, տեսավ օր կնիկն ուր ասածի պես էրեր է, ելավ նստավ, հրտ ուրանց հաց կերավ։ Ասեց.—Ախբրտանք, իմ ատաթ դինա՞ք իմալ է, մեկըմ օր ընծիկ մըսաֆըր հ՚իգա, չորս-հինգ օր պիտի մնա, ուտե, խմե, սորա կթորկիմ էրթա։

Նիհայեթ չորս օր, հինգ օր, հ՚իրկուն կիգեր, կուտեր, կխմեր էդոնց հետ ու կէրթեր պառկեր։

Օր մը հըմլա կֆքրեն, կասեն. «Ջանըմ, էդի էն մարդն է»։ Մեկել կասե՝ չէ։

Չորրորդ օր հ՚իրկուն նըստուկ կէղնի, ախչկան կասե։— Էկո զիմ օտք քաշե հանե, քիչըմ կհանգստի։

Կիգան քաշին կհանին։ Մարդիկ օր կտեսնան, ուրանց տեխ կմըսեն։ Կասեն. «Վալլահի, էն մարդն է»։ Քիչըմ օր կհանգստի, չէ՞ ցուցուց զօտք, յանի ես ձըր չարկի տեխ ինչ բարիկ կէնիմ, ելավ թողեց գնաց պառկավ։

Հար լուս էդ մարդոց աչք քուն չմտավ, կասեն. «Եր կէղնի օր լուսնա, ելնինք էրթանք»։

Լուսուն օր էղավ, իզին առան օր էրթեն, մարդ էդ օր լե չթողեց։ Կնկան թանբիհ էրեց.— Պաշար բան կողե, ճամբու դիր զէդ մարդիկ։

Էն հ՚իրկուն մեկ լե էկավ, գնաց խեչ ուրանց ժղլավ, հանեց ամեկուն տաս օսկի լե փարա տվեց, կնկան թանբիհ էրեց, օր լուսուն ելնի, իտա զպաշար, ուրանք թողեն էրթան։

Կնիկ կհարցու.— Էդոնք քու ի՞նչն են, օր հըմլա պատիվ կէնիս։

Էրիկն կասե—Իմն ու էդոնց աստված թըղ գինա։

Բան մը չասե կնկան. «Թե էդոնք ընձիկ բարեկամ են, յախուտ չարեկամ են»։

Բազբրկան ելավ լուսուն շուտ գնաց ուր դուքան։ Կնիկ լե ելավ տվեց զէդոնց ճամբու պաշար, ուրանց հանեց դոնեն դուրս, օր ճամբու գներ։

Կնիկն է, փորը չտարավ, հարցուց.—Ախբրտանք, դուք ի՞նչ կիգաք իմ էրկան, որ էդա խրտար իքրամ-ազաթ էրեց ձըզիկ։

Մարդիկ ասին.— Քուրիկ, մը հարցու, մըրն ու քու էրկան աստված թըղ իճրա էնե։

Ջէդ խոսք դրռ չըն ասի, մեկ լե գետին պատռվավ, մարդիկ գացէն գետըվնե ու մեկ լե գոցվավ։ Կնիկ շըշկռավ մնաց, փոր փոշման էղավ ուր հարցումի վրեն, թողեց էկավ տուն, էրեց զմատեն ու նստավ։

Հ՝իրկուն էկավ էրիկն տուն, գնաց նստավ մոր խեչ, տեսավ կնկա մատեն էրուկ է։ Հարցուց.—Կնիկ, քու մատեն հ՝ո՞րին ես էրի, զէն մարդիկ ճա՞մբու դրիր։

— Մարդ, մը հարցու, ելա լուսուն որ հանի դրռնեն ճամբու դնեմ, հարցուցի. «Դուք ի՞նչ կիգաք իմ մարդուն, որ էդ խրտար իքրամ-ազաթ էրեց ձըղիկ»։ Էրկուք հիտրաց վերուցին ասին. «Մը հարցուցի, մըրն ու քու էրկան աստված իճրա թըղ էնե»։ Դրռ էդ խոսքի մեջն են, գետին պատռավ, էրկուս լե գացին գետնի տակ։

— Հա՜յ, քու վիզ կոտրի, քու փոր կպատռե՞ր որ չհարցուցներ,— ասեց բաղըրկան։

Նոր պատմեց զուր գլխու գալած ուր մորն ու կնկան, փըրցավ ազատավ։

Աստծուց հ՝իչավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լե՝ անկաշ էնողին։